



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

«24» «սեպտեմբեր» 2021 թ. № 373-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 281-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 27-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, Անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 19-ի N444-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 281-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները.

- 1) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«ա. ջրային ռեսուրսների կառավարման վարչություն»,
- 2) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ.1» և «դ.2» պարբերություններով.
«դ.1 կենսառեսուրսների կառավարման վարչություն,
դ.2 թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն»:

ՆԱԽԱՐԱՐ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

9/24/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«24» սեպտեմբերի 2021թ.
ք. Երևան